

ԳՊՀ գիտական խորհրդի 2016 թ. նիստերի արձանագրություններ

Արձանագրություն 1

2016թ. հունվարի 29-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստ: Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 31 անդամներից 28-ը:

Նախագահ՝ Ռ. Հակոբյան

Քարտուղար՝ Թ. Ասոյան

Օրակարգ՝

1.ԳՊՀ 2016-2021թթ. ռազմավարական ծրագրի նախագծի ներկայացում և քննարկում:

/զեկ՝ ռեկտոր Ռ.Հակոբյան/

2.ԳՊՀ 2016-2021թթ. հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի նախագծի քննարկում:

/զեկ՝ ռեկտոր Ռ.Հակոբյան/

3.ՀՀ անկախության 25-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների մասին:

/զեկ՝ պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

4.Ընթացիկ հարցեր:

ԳՊՀ 2016-2021թթ. ռազմավարական ծրագրի նախագիծը ներկայացրեց ռեկտոր Ռ.Հակոբյանը: Նա նշեց, որ Գավառի պետական համալսարանում մշտապես առաջնահերթություններ են հռչակվել կրթության որակի բարձրացումը, որակյալ ուսումնական միջավայրի ապահովումը, որակի միջավայրի ձևավորումը: Համալսարանում փոխհամաձայնեցված գործում են բուհի բոլոր կառուցվածքային բաժանումները, թե՛ մագիստրատուրայում: Բացի մասնագիտական ուսուցումից՝ կարևորվում են ուսանողների ազգային- հայրենասիրական, քաղաքացիական, բարոյական, իրավական, հոգևոր-մշակութային, գեղագիտական դաստիարակության

խնդիրները: Գրեթե ամբողջովին իրագործվել են 2011-2016թթ ռազմավարական զարգացման ծրագրի դրույթները: Կառավարության կողմից արդեն մշակվել և քննարկման է դրվել կրթության զարգացման 2016-2021թթ. ռազմավարական ծրագիրը, որը պահանջում է նորովի մոտեցում ցուցաբերել կրթության հարցերին: Ծրագիրը քննարկվել է համալսարանում: Գավառի պետական համալսարանը ևս պետք է ունենա իր զարգացման ռազմավարական ծրագիրը, որը այժմ ներկայացված է քննարկման: Ծրագրում հաշվի են առնվել ինչպես հանրապետական, այնպես էլ տարածաշրջանային խնդիրներն ու առանձնահատկությունները:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացնելիս Ռ.Հակոբյանը նշեց, որ Գավառի պետական համալսարանը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում կոռուպցիայի հետ կապված խնդիրները: Ամենօրյա նպատակաուղղված աշխատանքի շնորհիվ հաջողվել է ստեղծել հակակոռուպցիոն միջավայր: Քննարկման ներկայացված 2016-2021թթ. հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիրը նպատակ ունի այսու հետ ևս խուսափել կոռուպցիոն երևույթներից:

Օրակարգի հարցերի շուրջ ելույթ ունեցան դեկանները, ամբիոնի վարիչները:

Հիմք ընդունելով զեկուցումները և ելույթները՝ գիտխորհուրդը Որոշեց՝

1. Հավանություն տալ ԳՊՀ 2016-2021 թթ. զարգացման ռազմավարական ծրագրին:

2. Հավանություն տալ ԳՊՀ 2016-2021 թթ. զարգացման հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրին:

Գիտխորհրդի նախագահ՝

Գիտքարտուղար՝

Ռ.Հակոբյան

Թ.Ասոյան